Օգոստոսի 4, 2021

Հարգելի ծնողներ, պահապաններ, աշխատակիցներ և համայնքի անդամներ,

Մինչ մենք շարունակում ենք պատրաստվել 2021-22 ուսումնական տարվա համար, ցանկանում ենք ծանոթացնել ձեզ որոշ էական տեղեկությունների հետ: Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանը վերադառնում է անձամբ ուսուցման եղանակին՝ ուղղորդվելով առողջապահական և անվտանգության գործակալությունների հրահանգներով: Կալիֆոռնիայի կրթական գրասենյակը (CDE) թույլ է տվել դպրոցական շրջաններին անձամբ հաճախելու եղանակով սկսել ուսուցումը՝ հնարավորություն տալով նաև սկսել ուսումն այլընտրանքային անկախ եղանակով:

Այս ուսումնական տարվա համար, 2021-22 ուժի մեջ մտած բյուջեն, համագումարի օրինագիծ (AB) 130-ը թույլ է տալիս ունենալ կրթական միայն երկու եղանակ. անձամբ և այլընտրանքային կամավոր եղանակի անկախ ուսուցման միջոցով:

Մենք ուրախ ենք**,** որ դպրոցները վերաբացվում են անձամբ հաճախման եղանակով երկուշաբթի**,** օգոստոսի ***16***-ին***:***

Այն ընտանիքները, որոնց հետաքրքրում է անկախ ուսուցումը, նահանգային AB 130 օրենքը 2021-22 ուսումնական տարվա համար ուղղորդում է հանդիսանում դպրոցական բոլոր շրջանների համար: Այս տարբերակը կամավոր այլընտրանքային ուսուցման եղանակ է այն աշակերտների համար, որոնց առողջական վիճակը թույլ չի տալիս անձամբ դպրոց հաճախել: Անկախ ուսուցումը կամավոր է, որի ընթացքում աշակերտը, ծնողի օգնությամբ, հետևում է դասերին տնային պայմաններում:

| Պահանջվում է **AB 130** օրենքի կողմից | Հատկացվում է ԲԴՄՇ-ի կողմից **2021-22** ուսումնական տարվա ընթացքում |
|---|---|
| Անցումային մանկապարտեզից **(TK) -3-**րդ դասարաններ — առօրյա առցանց (Synchronous) դասեր* բոլոր աշակերտների համար ուսումնական տարվա ընթացքում<br><br>**4-**րդ **- 5-**րդ դասարաններ — Շաբաթական առցանց (Synchronous) դասեր* և առցանց ուղիղ եթերով դասեր** բոլոր աշակերտների համար ուսումնական տարվա ընթացքում | Տարրական դպրոցի անկախ ուսուցման դասացուցակի օրինակ - երկուշաբթիից մինչև ուրբաթ<br>• Անցումային մանկապարտեզ (TK) -3-րդ դասարան -- առօրյա առցանց դասեր (Synchronous) կեսօրից հետո ժամը 3:00 - 4:00<br>• 4-րդ - 5-րդ դասարաններ -- շաբաթական առցանց դասեր (Synchronous) կեսօրից հետո ժամը 3:00 - 4:00<br>• Անցումային մանկապարտեզ (TK) -3-րդ դասարաններ -- ուղիղ եթերով առցանց դասեր տեղի չեն ունենա<br>• 4-րդ - 5-րդ դասարաններ -- ամեն օր ուղիղ եթերով առցանց դասեր<br>• Սոցիալ հուզական դաստիարակումը կընդգրկի համայնքային ուսուցում և կազմակերպվածություն: Աշակերտները շաբաթական առցանց եղանակով կհանդիպեն նշանակված ուսուցչի հետ ուսուցման գործընթացը հետագծելու նպատակով:<br><br>**ԱՄ (TK) - Մ (K)** դասարանների առօրյա ընդհանուր դասացուցակ<br><br>8:30 - 12:00 անկախ աշխատանք |

<table>
<tr>
<td></td>
<td>12:00-12:45 ճաշ<br><br>3:00-4:00 ուղիղ եթերով առօրյա առցանց դաս<br><br>1-ին -3-րդ դասարանների առօրյա ընդհանուր դասացուցակ<br><br>8:30 - 12:00 անկախ աշխատանք<br><br>12:00-12:45 ճաշ<br><br>1:00-2:25 անկախ աշխատանք<br><br>3:00-4:00 ուղիղ եթերով առօրյա առցանց դաս<br><br>4-րդ -5-րդ դասարանների առօրյա ընդհանուր դասացուցակ<br><br>8:30 - 12:15 անկախ աշխատանք<br><br>12:15-1:00 ճաշ<br><br>1:00-2:30 անկախ աշխատանք<br>3:00-4:00 ուղիղ եթերով շաբաթական առցանց դաս</td>
</tr>
<tr>
<td>6-րդ դասարան<br><br>• Շաբաթական առցանց (Synchronous) դաս* յուրաքանչյուր առարկայի համար (անգլերեն, մաթեմատիկա, հասարակագիտություն, գիտություն և ֆիզկուլտուրա)<br>• Ընտրովի դասերը (Electives) հասանելի են շաբաթական մեկ անգամ առցանց եղանակով<br>• Առօրյա ուղիղ եթերով դասեր** բոլոր աշակերտների համար ուսումնական տարվա ընթացքում</td>
<td>• Շաբաթական առցանց (Synchronous) դաս* յուրաքանչյուր առարկայի համար (անգլերեն, մաթեմատիկա, հասարակագիտություն, գիտություն և ֆիզկուլտուրա)<br>• Ընտրովի դասերը (Electives) հասանելի են շաբաթական մեկ անգամ առցանց եղանակով<br>• Առօրյա ուղիղ եթերով առցանց դասեր<br>• Սոցիալ հուզական դասավանդումը կընդգրկի համայնքային ուսուցում և կազմակերպվածություն: Աշակերտները շաբաթական առցանց եղանակով կհանդիպեն նշանակված ուսուցչի հետ ուսուցման գործընթացը հեշտացնելու նպատակով:</td>
</tr>
</table>

| | |
|---|---|
| **7-րդ- 8-րդ** դասարաններ<br><br>● Առնվազն շաբաթը մեկ անգամ առցանց (Synchronous) դասեր*<br>● Առօրյա ուղիղ եթերով դասեր** բոլոր աշակերտների համար ուսումնական տարվա ընթացքում | **7-րդ- 8-րդ** դասարաններ<br><br>● Աշակերտը պետք է արձանագրվի Անկախ կրթության ակադեմիայում **(**տեսեք ներքևում**)**<br>● ***APEX*** **-**ն առաջնային կրթական հարթակ է<br>● Սոցիալ հուզական դասավանդումը կընդգրկի համայնքային ուսուցում և կազմակերպվածություն: Աշակերտները շաբաթական առցանց եղանակով կհանդիպեն նշանակված ուսուցչի հետ ուսուցման գործընթացը հեշտացնելու նպատակով: |
| **9-**րդ**-12-**րդ դասարաններ —<br><br>● Առնվազն շաբաթական մեկ անգամ առցանց (Synchronous) դասեր* բոլոր աշակերտների համար ուսումնական տարվա ընթացքում<br>● Ուղիղ եթերով դասեր**,  ըստ անհրաժեշտության, բոլոր աշակերտների համար ուսումնական տարվա ընթացքում | **9-**րդ**-12-**րդ դասարաններ<br><br>● Աշակերտը պետք է արձանագրվի Անկախ կրթության ակադեմիայում **(**տեսեք ներքևում**)**<br>● ***APEX*** **-**ն առաջնային կրթական հարթակ է<br>● Սոցիալ հուզական դասավանդումը կընդգրկի համայնքային ուսուցում և կազմակերպվածություն: Աշակերտները շաբաթական առցանց եղանակով կհանդիպեն նշանակված ուսուցչի հետ ուսուցման գործընթացը հեշտացնելու նպատակով: |

*Առցանց դասավանդում *(Synchronous instruction)* նշանակում է դասասենյակային ոճով դասավանդում կամ փոքր խմբով կամ անհատական դասավանդում իրականացված առցանց եղանակով՝ ներառնելով ուղիղ եթերով, երկկողմանի հաղորդակցություն ուսուցչի և աշակերտի միջև։ Այն կատարվում է երեխայի համար նշանակված ուսուցչի կողմից։ .

**Ուղիղ եթերով (*Live interaction*) դասավանդում նշանակում է կենդանի կապ աշակերի և շրջանի աշխատակցի կամ ուսուցչի հետ և կարող է ընդգրկել աշակերտի հասակակիցներին՝ դպրոցի նման կապ պահպանելու համար և ներառելով, բայց չսահմանափակվելով հետևյալ միջոցառումներով. բարեկեցության ստուգումներ, առաջընթացի վերահսկում, ծառայությունների առաքում . դասավանդում։ Շփումը կկատարվի համացանցային եղանակով։

Որոնք ե՞ն անկախ ուսուցում ստացող աշակերտի ակնկալիքները:

- Մենօրյա ներգրավվածություն ուսումնական ծրագրի և դասարանական աշխատանքի հետ:
- Առանց շեղումների կրթական միջավայր
- Հանձնարարությունների ժամանակին կատարում և հանձնում
- Կրթական ազնվության բարձր չափանիշներ
- Դպրոցական հարթակների ամենօրյա վերահսկում, ներառելով էլեկտրոնային փոստի նամակները, Էրիս կայքը, Գուգլ դասասենյակը, APEX-ն ու դասագրքերը
- Կազմակերպված առօրյա ռեժիմ, ցուցակների կամ օրակարգի օգնությամբ, հանձնարարությունները կազմակերպելու համար
- Կապ ուսուցիչների և աշխատակազմի միջև՝ պարզաբանումներ և օգնություն ստանալու համար
- Հարգալից և համագործակցական կապ հասակակիցների միջև
- Հեռակա ուսուցումը նույն հանձնառությամբ կատարել ինչես ավանդական դպրոցում

Որոնք ե՞ն անկախ ուսուցում ստացող աշակերտի ծնողի ակնկալիքները:

- Աշակերտի դասերի ակտիվ վերահսկում, ներառյալ հանձնարարությունները, գնահատականները և հաճախումը
- Հետևողական կապ ուսուցչի և աշխատակազմի հետ
- Աշակերտի առանց շեղումների կրթական միջավայրի աջակցություն
- Աշխատանքի կատարման համար առօրյա ռեժիմի մշակում
- Հանդիպումներ ծրագրի աշխատակիցների հետ ըստ պահանջի
- Ապահովել աշակերտի ամենօրյա վերահսկումը դպրոցի բոլոր հարթակներում
- Հաղորդակցվել ուսուցիչների և դպրոցի աշխատակազմի հետ
- Ակտիվ դեր խաղալ աշակերտի ուսման ընթացքում և օգնել ըստ պահանջի
- Ֆիզիկական ակտիվ կյանքի և առողջ սննդի հնարավորություններ տալ աշակերտին

Տարրական դպրոցի անկախ ուսուցում

Դիմել տարրական դպրոցի գրասենյակին և գրասենյակի աշխատակիցը կվերցնի ձեր և ձեր երեխայի անունը: Ձեզ կիրավիրեն տեղեկատվական հանդիպման:

**6-**րդ դասարանի անկախ ուսուցում

Դիմել միջանկյալ դպրոցի գրասենյակին և գրասենյակի աշխատակիցը կվերցնի ձեր և ձեր երեխայի անունը: Ձեզ կիրավիրեն տեղեկատվական հանդիպման:

**7-12-**րդ դասարանների անկախ ուսուցում

7-12-րդ դասարաններում սովորող աշակերտներին անկախ ուսուցման ծրագրում արձանագրելու համար, խնդրում ենք լրացնել նշված ձևաթղթերը.

Անգլերեն.

https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSdQndDLx4mgLnlfFDSsJsoqz3GXQTPqYyc6_xyTCfuoxvq8Fw/formResponse;

Հայոց լեզու.
https://docs.google.com/forms/d/1xzScyOnYZ5JGrWzussyljyNw_ndxgRDH1YltTW2q1_Y/edit?ts=610b1276 (Armenian)

Իսպաներեն.
https://docs.google.com/forms/d/1NXIKae7aWguqq7LkxF6PkfmOwx1o4iLbptGsvDqaGMQ/edit?ts=610b0dac

Չորեքշաբթի, օգոստոսի 11-ի առավոտյան ժամը 9-ից ոչ ուշ

Խնդրում ենք օգտվել Անկախ ուսուցման վերաբերյալ հաճախակի տրվող հարցերի ցուցակից **(FAQ)** լրացուցիչ տեղեկություն ստանալու համար:

Անգլերեն
https://docs.google.com/document/d/1VNE5JYGRCRnk5mMoQLG2I5QkHDP5pYe5GKreiUZTxHg/edit#heading=h.q1zg9o34vux3

Հայոց լեզու.
https://docs.google.com/document/d/1B4gE077MnXfqhLupfxWBUG0Gn9Ib9t9Rc9sf-w0p2ZI/edit#heading=h.c09l7cn22cbb

Իսպաներեն.
https://docs.google.com/document/d/1zAOILl6yve0J94IiDmDmm1a38mgzYI0Db4aveH7rwC4/edit

Եթե որևէ հարցեր ունեք 7-12-րդ դասարանների անկախ ուսուցման վերաբերյալ, խնդրում ենք դիմել Անկախ կրթական ակադեմիայի վարիչ օրիորդ Վենդի Հրդին wendyheard@busd.org հասցեով:

Առողջություն և անվտանգություն

Ներկայումս, Լոս Անջելեսի հանրային առողջապահական գրասենյակը պահանջում է, որ բլորը, անկախ պատվաստանյութ ստացած կարգավիճակի, ներսում գտնված ժամանակ դիմակ կրեն: Բոլոր դպրոցները հագեցած են MERV13 օդի զտիչներով, որոնք օդափոխիչ համակարգի բարձրորակ զտիչներ են:

Մենք միշտ քաջալերում ենք աշակերտներին պահպանել հիգիենայի կանոնները: Խնդրում ենք խրախուսել և հիշեցնել աշակերտներին լվանալ ձեռքերը և օգտվել ձեռքերի ախտահանիչ նյութից: Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական գրասենյակը չի պահանջում դպրոցական շրջաններին Կորոնավիրուսի քննություն անցնել: Ըստ Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական գրասենյակի, եթե աշխատակիցը կամ աշակերտը քննության դրական պատասխան ստանա, ապա ախտանշաններ չունեցող պատվաստանյութ ստացած անհատին հարկավոր չէ մեկուսանալ:

Մենք անհամբերությամբ ենք սպասում անձամբ վերադառնալ դպրոց, ինչպես նաև հրամցնել անկախ ուսուցման տարբերակը 2021-22 ուսումնական տարվա համար, որը կսկսվի 2021 թվականի օգոստոսի 16-ին:

Անկեղծորեն,

Դոկտոր Մաթ Հիլլ, դպրոցների գերատեսուչ